ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 5, 1964 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

(Հասարակական գիտությունների սեկցիա)

Պատմության մեթոդոլոգիական հարցերի մշակման մասին*

ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի նախագահության հասարակական գիտությունների սեկցիան, քննելով ակադեմիկոս Պ. Ն. Ֆեդոսեևի և ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Յու. Պ. Ֆրանցևի՝ «Պատմության մեթոդոլոգիական հարցերի մշակման մասին» զեկուցումը, նշում է, որ սովետական պատմական գիտությունը, հենվելով պատմական պրոցեսի մարքսլենինյան ըմբռնման վրա, հատկապես վերջին տասնամյակում, ձեռք է բերել լուրջ հաջողություններ։ Խոր հետազոտությունների հիման վրա ստեղծվել են հասարակության զարգացման օրինաչափությունները բացահայտող մի շարք ընդհանրացնող աշխատություններ։ Լույս են տեսել «Սովետական Միության կոմունիստական պարտիայի պատմությունը», «Վ. Ի. Լենինի կենսագրությունը», ավարտվում են «Համաշխարհային պատմության» և «Սովետական Միության հայրենական մեծ պատերազմի պատմության» բազմահատոր հրատարակությունները, աշխատանք է ծավալվել «ՍՍՌՄ-ի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (12 հատորով) և «ՍՄԿՊ-ի պատմությունը» (6 հատորով) գրքերի ստեղծման ուղղությամբ։

Մեր օրերում հատուկ նշանակություն է ձեռք բերում գիտության մեթոդոլոգիական պրոբլեմների մշակումը։ Պատմական գիտության մեթոդոլոգիական հարցերը աչքի ընկնող տեղ գրավեցին 1962 թ. դեկտեմբերին տեղի ունեցած պատմաբանների համամիութենական խորհրդակցությունում ակադեմիկոս Ռ. Ն. Պոնոմարյովի զեկուցման մեջ և խորհրդակցության մասնակիցների ելույթներում։ ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի նախագահությունը 1963 թ. հոկտեմբերին քննարկեց ակադեմիկոս Լ. Ֆ. Իլյիչովի՝ «Բնագիտության և հասարակական գիտությունների մեթոդոլոգիական հարցերի մշակման մասին» զեկուցումը և պարտավորեցրեց բոլոր գիտական հաստատություններին՝ կազմակերպել այդ հարցերի ուսումնասիրությունը։

Մարքսիստական մեթոդոլոգիայի ստեղծագործական կիրառումը, լենինյան թեորիական ժառանգության ուսումնասիրումը հանդիսանում են պատմու-

---

* *1964 թ. հունվարի 3-ին և 6-ին ՍՍՌՄ ԳԱ նախագահության հասարակագիտության սեկցիայի ընդլայնված նիստում քննության է առնվել պատմական գիտությունների մեթոդոլոգիական պրոբլեմների հարցը։ Նիստում քննարկվել է ակադեմիկոս Պ. Ն. Ֆեդոսեևի, ՍՍՌՄ ԳԱ թղթակից-անդամ Յու. Պ. Ֆրանցևի՝ «Պատմության մեթոդոլոգիական հարցերի մշակման մասին» զեկուցումը, որի տեքստը նախապես ուղարկվել էր նիստի մասնակիցներին։*

Քննարկված հարցի մասին ՍՍՌՄ ԳԱ նախագահությունն ընդունել է սույն որոշումը։

«Вопросы истории» ամսագրի 1964 թ. № 3-ում հրապարակված է զեկուցման տեքստը, քննարկման հաշվետվությունը և կայացված որոշումը (տե՛ս էջ 3—68)։

թյան՝ որպես գիտության հաջող զարգացման հիմնական պայմանը։ Պատմական գիտության մեթոդոլոգիական պրոբլեմների ուսումնասիրման առաջնահերթ կարևորությունը պայմանավորված է նաև բուրժուազիայի գաղափարախոսության, ինչպես նաև պատմության բնագավառում դոգմատիկական ու ոնիզիոնիստական խեղաթյուրումների դեմ պայքարը ուժեղացնելու խնդիրներով։

Վերջին ժամանակներս ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի հումանիտար գիտություններին ինստիտուտներում ուժեղացվել է ուշադրությունը գիտության մեթոդոլոգիական հարցերի նկատմամբ, ավելի ու ավելի լայն զարգացում են ստանում ստեղծագործական աշխատանքի այնպիսի ձևերը, ինչպիսին են մեթոդոլոգիական սեմինարները։

ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի նախագահության հասարակական գիտությունների սեկցիան միաժամանակ նշում է, որ պատմության մեթոդոլոգիական պրոբլեմների ուսումնասիրման մակարդակը դեռևս չի համապատասխանում ժամանակակից էտապում գիտության զարգացման պահանջմունքներին։ Ցուցադրականությունը, նկարագրական մոտեցումը այս կամ այն իրադարձությունն ու երևույթն ուսումնասիրելիս, սոցիոլոգիական խոր ընդհանրացման բացակայությունը շարունակում են պատմական շատ աշխատությունների առավել թույլ կողմը մնալ։ Մեծ թերություններով է տառապում պատմաբան կադրերի պատրաստումը։ Էական վերամշակման պետք է ենթարկվեն բուհերի պատմության ֆակուլտետներում տարվող ուսուցման ծրագրերը և դասագրքերի բովանդակությունը, որպեսզի նրանցում ուժեղացվի սոցիոլոգիական պրոբլեմատիկան։

Խոշոր մեթոդոլոգիական պրոբլեմներ են ծառանում սովետական պատմաբանների կարևորագույն խնդիրները՝ ՍՍՌՄ-ում սոցիալիզմ և կոմունիզմ կառուցելու փորձը ընդհանրացնելու, ինչպես նաև ներկա ժամանակաշրջանի թեորիական մյուս ակտուալ հարցերը մշակելու ուղղությամբ։ Ժամանակակից համաշխարհային զարգացման պրոցեսներն ուսումնասիրելիս մեթոդոլոգիական պրոբլեմները որոշելու հարցում հասարակական կյանքի երևույթների բազմակողմանիությունը պահանջում է հասարակագետների ուժերի ավելի սերտ համախմբում։

ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի նախագահության հասարակական գիտությունների սեկցիան որոշում է.

1. ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի նախագահության հասարակական գիտությունների սեկցիայի բոլոր գիտական հիմնարկների ու գիտական խորհուրդների առաջնահերթ խնդիրներից մեկը պատմության բնագավառում համարել մեթոդոլոգիական հարցերի բազմակողմանի մշակումը, հատուկ ուշադրություն դարձնելով այնպիսի հանգուցային պրոբլեմների մշակման վրա, ինչպես պատմականի և սոցիոլոգիականի փոխադարձ կապակցվածությունը, համաշխարհային-պատմական պրոցեսի ընդհանուր օրինաչափությունների և առանձին երկրների ու երկրների խմբերի զարգացման յուրահատկությունների հարաբերակցությունը, պատմական պրոցեսի գիտական պերիոդիզացիան («Ֆորմացիա», «Պատմական էպոխա», «Պատմական էտապ» և այլ հասկացողությունների հարաբերակցությունը), պատմական առանձնահատուկ օրինաչափությունների ներգործության սֆերան, դասակարգերի և դասակարգային պայքարի դերը մարդկության զարգացման գործում, ժողովրդական մասսաների

և անհատի դերը պատմության մեջ, գիտակցականի և տարերայինի հարաբերակցությունը պատմական պրոցեսում, հասարակական մտքի զարգացման օրինաչափությունները, պատմության մեթոդոլոգիայի բնագավառում իդեալիստական սուբյեկտիվիստական կոնցեպցիաների քննադատությունը։

2. Գտնել անհրաժեշտ գիտական կոմունիզմի պատմության, մարքսիստական թեորիայի զարգացման լենինյան էտապի պատմության գծով հետազոտություն ծավալելը։ Այդ կապակցությամբ ուժեղացնել հասարակագետների աշխատանքը ՍՍՌՄ-ում սոցիալիզմ և կոմունիզմ կառուցելու գործում պարտիայի ու ամբողջ սովետական ժողովրդի պատմական փորձը, համաշխարհային բանվորական ու կոմունիստական շարժման զարգացման օրինաչափությունները ուսումնասիրելու գծով։ Համաշխարհային պատմության և ժամանակակից համաշխարհային զարգացման մեթոդոլոգիական ակտուալ պրոբլեմները մշակելիս հասարակագետների ուշադրությունը սրել՝ մարդկության դեպի կոմունիզմ ընթանալու պրոցեսի օրինաչափության պատմա-սոցիոլոգիական անալիզի վրա։

3. Հասարակական գիտությունների սեկցիայի բաժանմունքներին, համապատասխան գիտական խորհուրդներին առաջարկել՝ հեռանկարային պլանում նախատեսել մոտակա տարիներում այնպիսի ընդհանրացնող աշխատությունների ստեղծում, որոնք լուսաբանեն քաղաքի և գյուղի, մտավոր ու ֆիզիկական աշխատանքի միջև հակադրությունների երևան գալու և դրանք վերացնելու, ազգերի ու պետությունների միջև հակասությունների զարգացման և դրանք լուծելու, ընտանիքի, կուլտուրայի զարգացման, կնոջ դրության մեջ տեղի ունեցած փոփոխությունների, բնակարանային հարցի լուծման պատմական պրոցեսները։

4. Անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել պատմության մեթոդոլոգիական հարցերի ուսումնասիրման գործում բոլոր հասարակագետների ստեղծագործական ջանքերն համախմբելու և աշխատանքների կոորդինացումը բարելավելու համար։

Պատմության, փիլիսոփայության և իրավունքի, էկոնոմիկայի, լեզվի ու գրականության բաժիններին՝ ի կատարումն ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի 1963 թ. հոկտեմբերի 18-ի՝ «Բնագիտության և հասարակական գիտությունների մեթոդոլոգիական պրոբլեմների մշակման մասին» № 604 որոշման, մինչև 1964 թ. մարտի 1-ը առաջարկություններ մտցնել «Հասարակագիտության մեթոդոլոգիական պրոբլեմները» սերիայով աշխատությունների նախապատրաստման համար կոմպլեքսային հետազոտություններ կազմակերպելու մասին։

5. Հանձնարարել ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի պատմության բաժնին՝ միջոցներ ձեռք առնել ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի պատմական հիմնարկներում մեթոդոլոգիական սեմինարների աշխատանքը բարելավելու համար։ Պրակտիկա դարձնել կարևորագույն ընդհանուր մեթոդոլոգիական հարցերի գծով միացյալ միջինստիտուտային սեմինարներ անցկացնելը։

Հիմնականում հաստատել պատմության կարևորագույն մեթոդոլոգիական հարցերի գծով 1964—1965 թվականներին թեորիական դիսկուսիաներ ու կոնֆերանսներ անցկացնելու վերաբերյալ ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի պատմության բաժնի կողմից ներկայացված պլանը։

6. ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի պատմական ու փիլիսոփայական ամսագրերի («Վոպրոսի իստորիի», «Վոպրոսի ֆիլոսոֆիի», «Ռստորիա ՍՍՍՌ», «Նովայա ի նովեյշայա իստորիա», «Սովետսկայա էտնոգրաֆիա», «Սովետսկայա արխեոլոգիա», «Նարոդի Ազիի ի Աֆրիկի», «Վեստնիկ դրեվնեյ իստորիի», «Ազիյա ի Աֆրիկա սեգոդնյա») և միութենական ռեսպուբլիկաների գիտությունների ակադեմիաների ամսագրերի խմբագրություններին խորհուրդ տալ սիստեմատիկաբար աշխատություններ հրապարակել պատմության մեթոդոլոգիական պրոբլեմների վերաբերյալ։ ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի պատմության բաժնին՝ քննարկել այս ուղղությամբ ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի պատմական ամսագրերի աշխատանքները բարելավելու գծով միջոցառումների մասին հարցը։